«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱԿԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Խոսքային խանգարումները նախադպրոցական տարիքում

Առարկան՝ Կենսաբանություն

Հետազոտող ուսուցիչ՝Մանուկյան Կարինե

Ուսումնական հաստատություն՝Երևանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի անվան հ. 168 հիմնական դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն.....2
Գլուխ 1. ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ

1.1. Խոսքի զարգացումն օնտոգենեզում.....3

1.2. Խոսքի զարգացումը նախադպրոցական տարիքում 10

Գլուխ 2. ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Հետազոտության կազմակերպումը 13

2.2.Հետազոտության ընթացքը և արդյունքների
վերլուծությունը.....15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....25

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՑԱՆԿ.....26

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Հայտնի է, որ նախադպրոցական տարիքը համարվում է երեխայի խոսքի լիարժեք զարգացման առավել բարենպաստ ժամանակաշրջան: Նախադպրոցական երեխայի խոսքը պետք է ձևավորված լինի խոսքի բոլոր բաղադրիչների զարգացմամբ, մայրենի լեզվի պահանջներին և օրինաչափություններին համապատասխան: Նախադպրոցականի խոսքի զարգացման գլխավոր նպատակը հանդիսանում է երեխայի կողմից մայրենի լեզվի կանոնների և նորմերի յուրացումը, կոնկրետ իրավիճակներում դրանց համապատասխան և ճկուն կիրառումը: Այս տարիքիում երեխան ավելի շատ է զգում տեղեկատվության կարիք, այս գործում մեծ դերն ունի մեծերի հետ շփումն ու հաղորդակցումը, որը նպաստում է նրա խոսքային հմտությունների և կարողությունների զարգացմանը: Խոսքը հանդիսանում է մտածողության բարձրագույն ձևը:Սակայն հարկ է նշել, որ նախադպրոցական երեխաներից ոչ բոլորի խոսքն է հասնում զարգացման լիարժեք մակարդակի, հաճախ նկատվում են հնչատաբերության՝ հիմնականում սուլական և շչական, պայթական և ձայնորդ հնչյունների սխալ արտաբերում կամ բացակայություն: Երեխայի խոսքը բնութագրվում է աղքատ բառապաշարով, իմաստային նշանակությամբ բառերի սխալ կիրառմամբ: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ խոսքի տարբեր խանգարումներ ունեցող երեխաների ծնողները, հիմականում անհանգստություն են ցուցաբերում դպրոցական տարիքում, երբ այն իր բացասական ազդեցությունն է թողնում դպրոցական ուսումնական ծրագրերի յուրացման, ինչպես նաև ուսուցման, առաջադիմության և վարքի վրա: Գործնականորեն ապացուցված է, որ նախադպրոցական տարիքում առկա խոսքի խնդիրները ավելի արագ և արդյունավետ են հաղթահարվում, որն էլ իր հերթին հնարավորություն է ստեղծում խոսքի և հոգեկան գործընթացների լիարժեք զարգացմանը, տարիքային այս փուլում:

Հետազոտության նպատակը. ներկայացնել նախադպրոցական տարիքի երեխաների խոսքային խանգարումները:

Հետազոտության հեկյալ խնդիրները .

1. Ուսումնասիրել նախադպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացման առանձնահատկությունները:

2. Բացահայտել նախադպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացման մակարդակը:

Գլուխ 1 ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ

1.1. Խոսքի զարգացումն օնտոգենեզում

Խոսքը հանդիսանում է բարձրագույն հոգեկան գործընթաց, այն ունի մի շարք գործառույթներ, հիմնված է գլխուղեղի ուղեղային կառուցվածքների գործունեության վրա որոնցից յուրաքանչյուրը կատարում է որոշակի գործառույթներ: Խոսքը հանդիսանում է մտածողության գործիք և երեխայի ճանաչողության զարգացման միջոց: Խոսքային գործունեությունն ունի բարդ կառուցվածք, այն ներառում է աստիճանաբար ձևավորվող օպերացիաների կարողությունների, հմտությունների համախումբ, որոնք հաղորդակցման միջոցով ապահովում են լեզվի յուրացումը [14,-էջ105, 25]: Լեզվի յուրացման գործընթացում երեխան տիրապետում է տարբեր մակարդակի լեզվական հմտությունների: Խոսքի դերն ու նշանակությունը ճիշտ պատկերեցնելու համար, հարկ է հիշել երկու ազդարարային համակարգերի վերաբերյալ Ի.Պ. Պավլովի տեսակետը: Նա նշում է, որ շրջապատող աշխարհը մարդու կողմից արտացոլվում է, «ազդարարվում է» երկու ձևով. առաջինը՝ առարկաների և երևույթների անմիջական ազդեցությունները մեր զգայարանների վրա, երկրորդ՝ ազդեցություն բառերի միջոցով: Առարկաների զգայական պատկերների ամբողջությունը նա անվանեց առաջին, իսկ խոսքը՝ երկրորդ ազդարարային համակարգ: Խոսքը գլխավոր դեր է խաղում մարդու լիարժեք զարգացման գործում, այն ձևավորվում է ընկալման հիման վրա, մարդու վարքագիծը դարձնում է ոչ միայն կատարյալ, այլ մտածողության բարձրագույն ձև: Խոսքը հաղորդակցման յուրահատուկ և առավել կատարյալ ձև է, որը հատուկ է միայն մարդուն: Խոսքային հաղորդակցման, շփման գործընթացում մարդիկ մտքեր են փոխանցում և ներգործում են միմյանց վրա: Խոսքային հաղորդակցումն իրականացվում է լեզվի միջոցով: Լեզուն հնչյունային, բառային, քերականական, հաղորդակցման միջոցների համակարգ է: Խոսողն ընտրում է արտաբերման համար անհրաժեշտ բառեր, կապում է դրանք լեզվի քերականական օրենքների հետ և արտաբերում է խոսքային օրգանների արտասանության ճանապարհով: Որպեսզի մարդու խոսքը լինի հասկանալի և հոդաբաշխ, խոսքային օրգանների շարժումները պետք է լինեն ճշգրիտ և օրինաչափ: Դրա հետ մեկտեղ այդ շարժումները պետք է իրականացվեն ճշգրիտ և ավտոմատիկորեն, այսինքն՝ այնպիսիք, որոնք իրականացվում են առանց որոշակի կամային ջանքերի: Իրականում ամեն ինչ այդպես էլ լինում է: Սովորաբար խոսողը հետևում է միայն մտքի ընթացքին՝ չմտածելով այն մասին, թե լեզուն բերանում ինչ դիրք պետք է գրավի: Դա տեղի է ունենում խոսքի արտաբերական մեխանիզմի գործունեության արդյունքում: Խոսքը,

վարքի ձևերը մարդուն տրված են ծնված օրվանից, դրանք զարգանում են կյանքի պայմաններում նպատակաուղղված դաստիարակության, ուսուցման ազդեցությամբ: Բոլոր հոգեկան գործընթացները՝ ուշադրություն, հիշողություն, մտածողություն, երևակայություն զարգանում են խոսքի զարգացմանը զուգընթաց:

Խոսքի կապը այլ հոգեկան գործընթացների հետ իրականացվում է տարբերակված: Խոսքի ընկալման գործում մեծ դեր է խաղում գլխուղեղի վերլուծահամադրական գործընթացները: Խոսքային գործունեության ձևավորման համար անհրաժեշտ է երկու հզոր գործոնների առկայություն՝ կենսաբանական և սոցիալական:

Կենսաբանական գործոններից են՝

1. նորմալ, պահպանված անալիզատորների առկայություն՝ լսողական, տեսողական

2. առողջ կենտրոնական նյարդային համակարգ, խոսքային անալիզատորների՝ խոսքաշարժողական և խոսքալսողական պահպանված աշխատունակ վիճակ

3. երեխայի նորմալ ինքնազգացողություն՝ սոմատիկ վիճակ:

Երեխայի հոգեկան և սոցիալական զարգացման գործընթացում հսկայական է խոսքի դերը: Բոլոր հոգեկան գործընթացները՝ ընկալումը, հիշողությունը, երևակայությունը, մտածողությունը, ուշադրությունը, նպատակաուղղված վարքը ձևավորվում են խոսքի անմիջական մասնակցությամբ:

Սոցիալական գործոնների մեջ առավել կարևորվում է այն միջավայրը, որտեղ զարգանում է երեխան, այն միկրոսոցիումը, որտեղ իրականանում է երեխայի շփումը, հաղորդակցումը շրջապատի հետ: Այս գործոններից յուրաքանչյուրի բացակայությունը անդրադառնում է երեխայի խոսքի նորմալ զարգացման վրա:

Առանձնացնում են խոսքի զարգացման մի քանի ժամանակահատվածներ, որոնք կոչվում են՝ կրիտիկական: Կրիտիկական շրջանը խոսքի զարգացման համար նախատրամադրվածության պայման է հանդիսանում:

Առաջին կրիտիկական փուլը համարվում է կյանքի 1-2 տարին, երբ ձևավորվում են խոսքի նախադրյալները, հիմք հանդիսանալով խոսքի կոմունիկատիվ ֆունկցիայի, որի շարժիչ ուժը շփվելու ցանկությունն է: Այս տարիքում կատարվում է գլխուղեղի խոսքային կենտրոնների, հիմնականում Բրոկայի կենտրոնի ինտենսիվ զարգացում /14-18 ամսական/, յուրաքանչյուր, նույնիսկ աննկատ և անբարենպաստ

գործոնները կարող են այս ընթացքում իրենց հետքը թողնել երեխայի խոսքի զարգացման վրա:

Երկրորդ փուլը 3 տարեկանն է, երբ շատ ինտենսիվ զարգանում է երեխայի կապակցված խոսքը, իրավիճակային խոսքը փոխակերպվում է կոնտեքստայինի, որն էլ իր հերթին պահանջում է ԿՆՀ-ի խիստ համաձայնեցված աշխատանք՝ ուշադրության, հիշողության, խոսքաշարժողական մեխանիզմների: Այս շրջանում է, որ կարող է ի հայտ գալ խոսքի զարգացման հապաղում, կակազություն, մուտիզմ, երեխան կարող է հրաժարվել խոսքային հաղորդակցումից:

Երրորդ փուլը 6-7 տարեկանը, գրավոր խոսքի զարգացման շրջան է, երբ մեծանում է ԿՆՀ-ի ծանրաբեռնվածությունը: Երեխայի նկատմամբ խիստ պահանջների ներկայացման դեպքում կարող է տեղի ունենալ տրամադրության, ակտիվ գործունեության անկում, որը առաջ է բերում խոսքային խանգարումներ: Եթե երեխան մինչև 6 տարեկան հասակը շրջապատի կողմից չի ստանում նորմայում պահանջվող շփում և հաղորդակցում, որը նպաստում նրա խոսքի զարգացմանը, ապա նրա խոսքը կարող է ձևավորվել սխալ [15- էջ 472, 28]:

Նորմայում բոլոր երեխաների մոտ 3 ամսականում ձևավորվում է գղգղանքը, նույնիսկ չլսող և զարգացման խնդիրներով երեխաները ունեն գղգղանքի փուլ, 6-7 ամսականում, երբ գղգղանքը փոխվում է թոթովանքի, խնդիր ունեցող երեխաների մոտ այն հապաղում է: Թոթովանքը մեծ նախապայման է խոսքի զարգացման համար քանի որ՝

1. դեռ ոչ կամային մակարդակում ձևավորվում են արտաբերական ապարատի շարժումների համադրությունները

2. ձևավորվում են հնչյունային շղթաները և խոսքի ինտոնացիան:

Ծնվելուց հետո առաջին ամիսներին ինտենսիվորեն զարգանում են երեխայի լսողական, տեսողական, շարժողական-կինեսթետիկ վերլուծիչները: Նորածին երեխայի արտաբերական ապարատը պատրաստ է գործել, սակայն անհրաժեշտ երկարատև նախապատրաստական շրջան մինչև նա կարողանա արտաբերել խոսքի հոդաբաշխ հնչյունները: Երեխայի առաջին հնչյունները ճիչերն են, որոնք ոչ պայմանական ռեֆլեքսային ռեակցիաներ են ի պատասխան արտաքին և ներքին գրգռիչների ազդեցություններին [15- էջ472]:

Ա. Ն. Գվոզդևը նորածինների ճիչերը, բնութագրել է արտաշնչում՝ բաց բերանային խոռոչի պայմաններում, որի արդյունքում ստացվում է ձայնավոր տիպի հնչյուններ:

Ծնվելուց հետո արդեն առաջին ամիսներին փոխկապակցվածություն է բացահայտվում շարժողական և ձայնային ակտիվության զարգացման միջև: Երեխաների մոտ գղգղանքի շրջանը (2 6ամիս) համընկնում է նրանց ընդհանուր շարժողական ակտիվացման հետ, երեխայի մոտ ի հայտ են գալիս շոշափողական շարժումներ, նա կարողանում է ձեռքը պարզել օբյեկտին և տեսողության հսկողությամբ բռնել այն: Այս շրջանում երեխայի մոտ առաջանում է «աշխուժացման կոմպլեքս» [15-էջ 472]: Դրա կազմի մեջ մտնող շարժողական և ձայնային ռեակցիաները դառնում են մեծահասակի հետ երեխայի հաղորդակցման ակտիվ ձև: Երեխայի հուզական գրգռման վիճակում կծկվող մկաններից տակտիլ-կինեսթետիկ գրգիռների հոսքը հասնում է կենտրոնական նյարդային համակարգ որոշ ժամանակային ինտերվալով շուտ, քան համապատասխան ինքնալսողական և ինքնատեսողական գրգիռները, որն էլ ստեղծում է խոսքի երկրորդ ազդանշանային համակարգի այն հենքային բաղադրիչը որի մասին նշում էր Ի. Պ. Պավլովը:

Արտաքին միջավայրի այն հչյունային համակարգերը, որոնք առկա են երեխայի մոտ, նա ոչ միայն լսում այլև փորձում է նմանակելով վերարտադրել:

Թոթովանքի շրջանում (5 - 9 ամիս) բնութագրվում է երեխայի շարժողականության հետագա կատարելագործմամբ՝ ձևավորվում է նստելու, մագլցելու, առարկաները վերցնելու և դրանցով գործողություններ կատարելը: 5-6-րդ ամսում երեխայի մոտ առաջանում են շրթնային և ձայնավոր հնչյունների համակցություններ՝ բաա, մաա, ինչպես նաև լեզվային հնչյունների՝ տաա, լաա, որոնք հետագայում փոխարինվում են շղթաների՝ տյա – տյա – տյա, տե –տյա – տե և վերջապես 1 տարեկանում ի հայտ են գալիս հետևյալ վանկային շղթաները՝ մա – լյա, պա – նա – նա և այլն: Երեխան տիրապետում է բաց վանկի կառուցվածքին [13 – էջ 25, 15 - էջ472]:

Շատ հետազոտողներ նշում են, որ 9-18 ամսում տեղի է ունենում երեխայի խոսքի զարգացման սկզբնական փուլը: Այս շրջանին բնորոշ է արտաբերական մոտորիկայի և ձեռքերի նուրբ տարբերակված շարժումների ինտենսիվ զարգացումը:

Հնչյունային առումով առաջին բառերը շատ պարզ են: Նրանք կազմված են մեկ կամ երկու բաց վանկերից: Երկվանկ բառերում վանկերը հիմնականում միանման են՝ բա-բա, մա-մա, բի-բի և այլն, ինչը հիշեցնում է վանկերի կրկնություն:

Այսպիսով մինչխոսքային շրջանում, երեխան վարժվում է առանձին հնչյունների, վանկերի և վանկային միավորումների արտաբերման մեջ: Տեղի է ունենում լսողական և խոսքաշարժողական պատկերների կոորդինացիա: Մշակվում են մայրենի լեզվի մեղեդային կառույցները, ձևավորվում են հնչութային լսողության զարգացման

նախադրյալներ, առանց որի անհնար է ամենապարզ բառի արտաբերումը: Խոսքի հնչյունային կողմի զարգացումը սերտորեն կապված է շարժողական զարգացման, ծայրամասային խոսքային ապարատի աշխատանքի կատարելագործման հետ [13]:

Օնտոգենեզում ձայնային գրգռիչների նկատմամբ ռեակցիաները նկատվում են արդեն նորածնի մոտ: Դրանք արտահայտվում են ամբողջ մարմնով ցնցվելով, շնչառության և պուլսի փոփոխությամբ: Որոշ ժամանակ անց՝ երկրորդ շաբաթում, հնչյունային գրգռիչները առաջացնում են ժամանակավորապես ընդհանուր շարժումների և ճիչի ընդհատում: Այս բոլոր ռեակցիաները ունեն բնածին, ոչ պայմանական ռեֆլեքսների բնույթ [28]:

Եթե կյանքի առաջին տարվա վերջում երեխան իր լսած խոսքում որսում է հիմնականում մեղեդայնությունը և ռիթմը, ապա կյանքի երկրորդ տարում նա սկսում է ավելի ստույգ տարբերակել խոսքի հնչյունները, բառի հնչյունային կազմը [26- էջ 571, 27-էջ114]:

Մոտավորապես երրորդ տարվա վերջին երեխան ձեռք է բերում խոսքի բոլոր հնչյունները տարբերակելու կարողություն: Հնչութային լսողության զարգացումը և կատարելագործումը շարունակվում է նաև նախադպրոցական տարիքում: Հնչութային լսողության զարգացման որոշիչ գործոնը հանդիսանում է երեխայի խոսքի զարգացումը շրջապատող մարդկանց հետ հաղորդակցման գործընթացում: Երեխայի հնչութային լսողությունը ձևավորվում է իմպրեսիվ խոսքի զարգացման գործընթացում: Հնչութային լսողության տիրապետումը նախորդում է խոսքային գործունեության մյուս ձևերին՝ բանավոր խոսքին, գրավորին, ընթերցանությանը այդ պատճառով հնչութային գործունեությունը հիմք է հանդիսանում բարդ խոսքային համակարգի համար: Խոսքն ընկալելիս երեխան բախվում է բազմատեսակ հնչողությունների հետ՝ հնչույթները խոսքի հոսքում փոփոխական են, նա լսում է հնչյունների շատ տարբերակներ, որոնք միավորվում են հաջորդականության մեջ: Զարգանում է նաև հնչյունային լսողությունը, որը իրականացնում է «վանկերի անընդհատ հոսքին հետևելով»: Հնչութային և հնչյունային լսողությունը նպաստում են ոչ միայն ուրիշի խոսքի ընկալմանը, այլ նաև սեփական խոսքի հսկողությանը: Հնչութային լսողությունը մարդու ֆիզիկական լսողության հատուկ ձև է, որը թույլ է տալիս լսել և տարբերակել մայրենի լեզվի հնչյունները: Երեխայի բառապաշարի զարգացումը կապված է մի կողմից մտածողության և մյուս հոգեկան գործընթացների զարգացման հետ, մյուս կողմից՝ խոսքի բոլոր բաղադրիչների զարգացման հետ ՝ հնչյունահնչութային և քերականական կառույցի: Երեխան բառերի օգնությամբ նշում է այն ինչը հասկանում է, դրա հետ կապված երեխայի բառապաշարում ավելի շուտ են առաջանում կոնկրետ

նշանակության բառերը, իսկ ընդհանրական բնույթի բառերն առաջանում են ավելի ուշ: Օնտոգենեզում երեխայի բառապաշարի զարգացումը պայմանավորված է նաև շրջապատող իրականության մասին երեխայի պատկերացումների զարգացմամբ: Երեխայի կողմից շրջապատող աշխարհի յուրացումը իրականացվում է խոսքային և ոչ խոսքային գործունեության ընթացքում իրական օբյեկտների ու երևույթների հետ անմիջական փոխհամագործակցության, ինչպես նաև մեծահասակի հետ հաղորդակցման միջոցով: Լ. Ս. Վիգոտսկին նշում էր, որ երեխայի խոսքի առաջնային ֆունկցիան շրջապատող աշխարհի հետ կոնտակտի հաստատումն է՝ հաղորդակցման ֆունկցիան: Վաղ տարիքի երեխայի գործունեությունը իրականացվում է մեծահասակի հետ համատեղ և դրա հետ կապված՝ հաղորդակցումը կրում է իրադրական բնույթ:

Ներկայումս, հոգեբանական և հոգելեզվաբանական մասնագիտական գրականության մեջ ընդգծվում է, խոսքի զարգացման նախադրյալների կապը հետևյալ գործընթացներով՝ երեխայի ոչ խոսքային առարկայական գործունեություն և զգայական ընկալման միջոցով շրջապատող աշխարհի հետ կապերի կոնկրետ ընդլայնումը: Խոսքի զարգացման, այդ թվում նաև բառապաշարի հարստացման երկրորդ կարևորագույն գործոնը, երեխայի հետ մեծահասակների խոսքային շփումն ու հաղորդակցումն է [10-էջ 27-43,13 –էջ 25]: Սկզբնական շրջանում մեծահասակների հետ հաղորդակցումը կրում է միակողմանի և հուզական բնույթ, երեխայի մոտ առաջանում է շփման մեջ մտնելու և իր պահանջները արտահայտելու ցանկություն: Հետո երեխան գիտակցաբար, աստիճանաբար ներառվում է խոսքային գործունեության մեջ, հաղորդակցմանը մասնակցում է լեզվի օգնությամբ: Սկզբում բառը կարող է նրա համար ունենալ մի քանի նշանակություն: Միևնույն բառով կարող է նշել և առարկա, և գործողություն և հատկանիշ: Բառն ուղեկցվում է որոշակի մեղեդայնությամբ, ժեստերով, որոնք հստակեցնում են դրա նշանակությունը: Բառի նշանակության հստակեցման հետ տեղի է ունենում նաև բառի նշանակության կառույցի զարգացում: Հայտնի է, որ բառը իր կառույցով կարող է ունենալ բարդ նշանակություն՝ մի կողմից, բառը նշում է որոշակի առարկա, հարաբերակցվում է առարկայի կոնկրետ պատկերի հետ, մյուս կողմից՝ բառը ընդհանրացնում է առարկաների, հատկանիշների, գործողությունների համակցությունը: Բառը նշանակության տարբեր երանգներ է ձեռք բերում՝ կախված կոնտեքստից և նույնիսկ հնչերանգից [26- էջ 571]:

Երեխայի կենսափորձի հարստացումը, իր գործունեության և շրջապատող մարդկանց հետ հաղորդակցման զարգացումը հանգեցնում է բառապաշարի աստիճանական քանակական աճին :

Ըստ Ե.Ա. Արկինի բառապաշարի աճը բնութագրվում է հետևյալ առանձնահատկություններով `

1 տարեկան - 9 բառ

1 տարեկան, 6ամսական - 39 բառ

2 տարեկան - 300 բառ

3 տարեկան, 6ամսական - 1110 բառ

4 տարեկան - 1926 բառ

Ըստ Վ. Շտեռնի տվյալների

1,5 տարեկան- 100 բառ

2 տարեկան` 200-400 բառ

3 տարեկան- 1000-1110 բառ

4 տարեկան -1600 բառ

5 տարեկան- 2200 բառ :

Ըստ Ա.Ն. Գվոզդևի տվյալների 4 տարեկան երեխայի բառապաշարում նկատվում են 50,2% գոյականներ, 27,4% բայեր, 11,8% ածականներ, 5,8% մակբայներ, 1,9% թվականներ, 1,2% կապեր, 0,9% նախդիրներ, 0,9% ձայնարկություններ:

Այսպիսով, հոգեկան գործընթացների զարգացման (մտածողության, ընկալման, պատկերացումների, հիշողության), շրջապատող աշխարհի հետ կոնտակտների ընդլայնման երեխայի զգայական փորձի ընդհանրացման, նրա գործունեության որակական փոփոխության հետ ձևավորվում են նաև երեխայի բառապաշարը քանակական և որակական ասպեկտներով: Խոսքի զարգացման ընթացքում երեխան ծանոթանում է լեզվի հետ որպես համակարգի, բայց նա դեռ ունակ չէ միանգամից յուրացնելու լեզվի բոլոր օրինաչափությունները, ողջ բարդ լեզվական համակարգը, որը մեծահասակը օգտագործում է իր խոսքում [28]: Խոսքային հաղորդակցման գործընթացում երեխան շրջապատի խոսքից պարզապես, պասիվ կերպով չի փոխառնում բառեր և բառակապակցությունները, այլ դրանք ամրապնդում իր

գիտակցության մեջ: Խոսքին տիրապետելիս երեխան ակտիվ վերլուծում է շրջատի խոսքը, առանձնացնում է ձևույթները և միավորելով ստեղծում է նոր բառեր: Երեխայի խոսքը սկզբնական շրջանում բնութագրվում է որպես իրավիճակային: Երեք տարեկանից երեխայի մոտ ձևավորվում է կոտեքստային խոսքը: Կապակցված խոսքը պետք է ձևավորված լինի մինչ դպրոց հաճախելը: Երեխայի կյանքի երեքից մինչև վեց տարեկանը համարվում է նախադպրոցական տարիք: Այս տարիքում երեխայի համար առաջատար է համարվում խաղային գործունեությունը [14 –էջ504]: Նորմալ զարգացման դեպքում երեք տարեկանում երեխան յուրացնում է մայրենի լեզվի խոսքի հիմնական քերականական կառույցները: Նախադասությունները կազմվում են հիմնականում ենթակայից և ստորոգյալից, բայց ավելացվում են նաև լրացումներ՝ որոշիչ, հատկացուցիչ, խնդիրներ: Ակտիվորեն զարգանում է ակտիվ և պասիվ բառապաշարը, որում լինում են բոլոր խոսքի մասերին պատկանող բառեր: Երեխան սովորում է բառերը հոլովել և խոնարհել, օգտագործում է հրամայական, հաստատական, բացականչական, հարցական նախադասություններ: Նախադասության մեջ բառերը համաձայնեցվում են ըստ դեմքի, թվի և ժամանակի: Չորս տարեկանում երեխան սկսում է օգտագործել իր բառապաշարում ունեցած բոլոր բառերը: Երեխաները կարողանում են պատասխանել հարցերին, վերապատմել հեքիաթներ ու պատմվածքներ, պատմել իրենց տեսածը:

1.2. Խոսքի զարգացումը նախադպրոցական տարիքում

Նախադպրոցական երեխայի խոսքի լիարժեք զարգացումը կարևորագույն նախապայման է հանդիսանում է մայրենին լեզվի, դպրոցական ուսումնական ծրագրերի յուրացման, ինչպես նաև ուսուցման և առաջադիմության վրա: Ապացուցված է, որ խոսքի ոչ լիարժեք զարգացումը կարող է անբարենպաստ անդրադառնալ երեխայի վարքի, շփման և հաղորդակցման անձի լիարժեք ձևավորման գործընթացում: Գործնականորեն ապացուցված է, որ նախադպրոցական տարիքում առկա խոսքի խնդիրները ավելի արագ և արդյունավետ են հաղթահարվում, որն էլ իր հերթին հնարավորություն է ստեղծում խոսքի և հոգեկան գործընթացների լիարժեք զարգացմանը տարիքային այս փուլում [6 –էջ45]:

Ժամանկակաից հոգեբանությունը խոսքը դիտում է որպես շփման, հաղորդակցման միջոց, գիտակցության գործունեության բարդ և հատուկ ձև: Խոսքը բարդ, ինքնատիպ

ֆունկցիա է, որը դրսևորվել է մարդու աշխատանքային գործունեության շնորհիվ՝ որպես հաղորդակցման միջոց: Երեխայի հոգեկան և սոցիալական զարգացման գործընթացում հսկայական է խոսքի դերը: Բոլոր հոգեկան գործընթացները՝ ընկալումը, հիշողությունը, երևակայությունը, մտածողությունը, ուշադրությունը, նպատակաուղղված վարքը ձևավորվում են խոսքի անմիջական մասնակցությամբ: Սոցիալական գործոնների մեջ առավել կարևորվում է այն միջավայրը, որտեղ զարգանում է երեխան, այն միկրոսոցիումը, որտեղ իրականանում է երեխայի շփումը, հաղորդակցումը շրջապատի հետ: Այս գործոններից յուրաքանչյուրի բացակայությունը անդրադառնում է երեխայի խոսքի նորմալ զարգացման վրա [6 – էջ45]:

Վերլուծելով 5-6 տարեկան երեխայի խոսքի բառային կազմը՝ Ա.Վ. Զախարովան առանձնացրել է երեխաների խոսքում առավել օգտագործվող բառերը՝ գոյականներ (մայրիկ, հայրիկ, աղջիկ, տղա, մարդիկ, ընկեր), ածականներ (փոքր, մեծ, վատ, մանկական), բայեր (գնալ, խոսել, բերել տանել): Երեխայի խոսքում հաճախակի հանդիպում են լայն նշանակությամբ ածականներ (մեծ, փոքր, վատ), հատկանիշներ ամենագործածական սեմանտիկական խմբերից՝ չափ (մեծ-փոքր), գնահատում (լավ-վատ): Չափի նշանակությամբ ածականների սեմանտիկական դաշտի կառուցվածքի առանձնահատկությունը դրա անհամաչափությունն է՝ «մեծ» նշանակությամբ ածականները ավելի լայնորեն են տարածված քան «փոքր» նշանակությամբ ածականներ: Հինգից, վեց տարեկան երեխայի խոսքը վերլուծելիս նկատվում են գույն նշող առավել 40 ածականներ: Երեխաների խոսքում այս խմբի ածականները ավելի տարածված են, քան մեծահասակների խոսքում: Այս տարիքի երեխաների խոսքում առավել ներկայացված են հետևյալ ածականները՝ սև, կարմիր, սպիտակ, կապույտ: Նախադպրոցականի խոսքի զարգացման նպատակներից մեկը համարվում է խոսքի ունակության զարգացումը, բանավոր և գրավոր խոսքի հարուստ բովանդակության արտահայտման կարողությունը: Կարելի է ասել, որ այս տարիքի երեխայի խոսքի զարգացման նպատակը ոչ միայն ճիշտ խոսքի, այլ բանավոր խոսքի լիարժեք ձևավորումն է՝ իհարկե հաշվի առնելով նրա տարիքային առանձնահատկություններն ու հնարավորությունները:

Այս տարիքում ճիշտ և լիարժեք խոսքը բնութագրվում է՝

- մայրենի լեզվի հնչյունների և բառերի ճիշտ արտաբերմամբ
- բառապաշարի զարգացմամբ
- իմաստային առումով բառերի ճիշտ կիրառմամբ

- տվյալ լեզվի քերականական կանոններին համապատասխան բառերի ճիշտ փոխարինմամբ
- կապակցված խոսքի զարգացմամբ:

Խոսքի հնչյունայի համակարգի զարգացումը բազմակողմանի խնդիր է, այս տարիքում ավարտվում է հնչյունների ճիշտ արտաբերման ձևավորումը: Նորմայում բոլոր երեխաները պետք է կարողանան հստակ արտաբերել մայրենի լեզվի բոլոր հնչյունները [8 –էջ 55-59, 9 –էջ78]:

Խոսքի հնչյունայի համակարգի զարգացումը բնութագրվում է՝

- խոսքային լսողության զարգացմամբ
- ճիշտ հնչարտաբերության զարգացմամբ

Անդրադառնալով, խոսքի հնչյունային կողմի զարգացմաը հարկ է նշել խոսքի երանգավորման (ինտոնացիա) մասին, որոնք ևս կարևոր դեր են խաղում խոսքի ճիշտ զարգացման գործընթացում՝ դրանք են.

- խոսքի արտահայտչականության զարգացում (ձայնի տոն, տեմպ, տեմբր, բարձրություն, ինտոնացիա)
- առոգանության զարգացում

Երեխաները դեռ վաղ հասակից են տիրապետում ձայնի ինտոնացիոն կողմի (խիստ, մեղմ, բարկացկոտ, հանդարտ) տարբերակմանը: Ըստ խոսքի նյութի պահանջի երեխան հեշտությամբ կարողանում է փոխել սեփական ձայնի բարձրությունը, ուժգնությունը: Խոսքի նորմալ տեմպը, նույնպես շատ կարևոր է նախադպրոցականի խոսքի արտահայտչական կողմի զարգացման համար, թե դանդաղ և թե արագ տեմպը, առաջ է բերում ինչպես հնչյունների այնպես էլ վանկերի հաճախ նաև բառերի բացթողումներ, ինչն էլ երեխայի խոսքը դարձնում է անհասկանալի: Ավագ նախադպրոցականները ձայնի ինտոնացիայի միջեցով պետք է կարողանան արտահայտել նախադասության սկիզբը և ավարտը, անավարտ մտքերը, դադարները:

Նախադպրոցական տարիքում խոսքի երանգավորման զարգացման համար շատ հարմար են մանկական բանաստեղծությունների, ժողովրդական հեքիաթների ու առակների ուսուցումը [6 –էջ45, 7 –էջ51-60]:

Սակայն հարկ է նշել, որ նախադպրոցական տարիքում ոչ բոլոր երեխաների խոսքն է հասնում զարգացման լիարժեք մակարդակի: Հաճախ նկատվում են

հնչարտաբերության՝ հիմնականում սուլական և շչական, պայթական և ձայնորդ հնչյունների սխալ արտաբերում կամ բացակայություն:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Հետազոտության կազմակերպումը

Հետազոտությունը անց ենք կացրել Երևանի թիվ 50 նախադպրոցական հաստատությունում:

Հետազոտվել են թվով տաս, 4,5 – 5,5 տարեկան նախադպրոցական երեխաներ:

Հետազոտության ընթացքում կիրառել ենք Ռ. Ի. Լալևայի, Տ.Բ. Ֆիլիչևայի, Գ. Վ. Չիրկինայի, Օ. Ս. Ուշակովայի խոսքի ընդհանուր հետազոտմանն ուղղված մեթոդիկան: Երեխաների խոսքի ընդհանուր մակարդակի գնահատման համար, ենթարկելով փոփոխության օգտվել ենք Տ.Ա. Ֆոտեկովայի մշակած խոսքի մակարդակի բացահայտման և գնահատման բալային համակարգից:

Մեթոդիկան նախատեսված է նախադպրոցական երեխաների խոսքի զարգացման առանձնահատկությունների, խոսքի խանգարումների «ռիսկի խմբի» բացահայտմանը:

Հետազոտությունը իրականացվել է 2 փուլով՝

1. Լոգոպեդական հետազոտություն խոսքային քարտերի միջոցով
2. Բանավոր խոսքի ուսումնասիրում և գնահատում

Մասնագիտական գրականության տեսական վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել նախադպրոցական տարիքի երեխաների խոսքի զարգացման ուսումնասիրման հիմնական ուղղությունները.

1. Արտաբերական ապարատի շարժողականություն
2. Հնչարտաբերություն
3. Հնչութային ընկալում

4. Բարդ վանկային կառուցվածքով բառերի արտաբերում
5. Բառապաշար
6. Տարբեր խոսքային միավորների վերլուծություն
7. Խոսքի քերականական կառուցվածք
8. Կապակցված խոսք

Այսպիսով ՝ 5 միավորով գնահատվել են այն երեխաները, որոնք հստակ և ճիշտ արտաբերել են մայրենի լեզվի բոլոր հնչյունները: Տրված բոլոր առաջադրանքները կատարել են ինքնուրույն, ունեն նորմալ կապակցված և քերականորեն ճիշտ ձևավորված խոսք:

3 միավորով գնահատվել են այն երեխաները, որոնց խոսքում առկա են հնչյունների արտասանության աղավաղումներ, փոխարինում և շփոթում, հնչյունային վերլուծության և համադրության խանգարում:

1 միավորով գնահատվել են այն երեխաները, որոնք ունեն հնչարտաբերման թերություններ՝ հիմնականում սուլական, շչական, պայթական և ձայնորդ

Բանավոր խոսքի զարգացման հետազոտության արդյունքների գնահատման բալային համակարգը թույլ է տալիս բացահայտել երեխայի խոսքի զարգացման ընդհանուր մակարդակը:

I. Երեխայի տարիքին համապատասխան բանավոր խոսքի զարգացման բարձր մակարդակ
II. Երեխայի տարիքին համապատասխան բանավոր խոսքի զարգացման միջին կամ բավարար մակարդակ
III. Երեխայի տարիքին համապատասխան բանավոր խոսքի զարգացման ցածր կամ անբավարար մակարդակ

Ելնելով վերոնշյալից՝ կարելի է վստահ ասել, որ այն երեխաները, որոնք ունեն բանավոր խոսքի զարգացման բարձր մակարդակ և պատկանում են առաջին խմբին, կարող են սահմանափակվել միայն նախադպրոցական հաստատություններում կրթական ծրագրով իրականացվող խոսքի զարգացման աշխատանքներով և հեշտությամբ կհաղթահարեն դպրոցական ուսումնական ծրագրերը:

Բանավոր խոսքի զարգացման երկրորդ՝ միջին կամ բավարար մակարդակ ունեցող երեխաներին պետք է նախադպրոցական տարիքում անպայման ցուցաբերել

լոգոպեդական օգնություն՝ հաղթահարելու առկա խնդիրները, որոնք կարող են խոչընդոտել դպրոցական ուսումնական գործընթացը և առաջացնել այլ բարդություններ ևս:

2.2. Հետազոտության ընթացքը և արդյունքների վերլուծությունը

1. Արտաբերական ապարատի շարժողականության հետազոտություն

Արտաբերական ապարատի շարժողականության հետազոտությունը իրականացվել է տաս վարժությունների հիման վրա: Մեր կողմից ընտրվել է հետևյալ վարժություններ՝ «ժպիտ», «փղի կնճիթ», «ասեղ», «բաժակ», «բահ», «ճոճանակ», «ժամացույց», «ներկարար», «ձիուկ», «փայտփորիկ»: Յուրաքանչյուր վարժություն ցուցադրվել է համապատասխան նկարով, ներկայացվել է փոքրիկ պատմության ձևով, այնուհետև կատարել է հետազոտողը, նոր միայն առաջարկվել է երեխային նմանակել և կրկնել հայելու առաջ:

Բարձր միավորով են գնահատվել այն երեխաները, որոնք հստակ կարողացել են կատարել ութից տաս վարժություն, միջին գնահատական են ստացել հինգից ութ վարժություն կատարող երեխաները և ցածր են գնահատվել այն երեխաները որոնք կարողացել են կատարել երեքից հինգ վարժություն:

2. Հնչարտաբերության հետազոտություն

Հնչարտաբերության հետազոտության համար ընտրվել է հնչողությամբ մոտ բառերի արտաբերում: Դրանք այն հնչյուններ պարունակող բառեր էին, որոնց խանգարումներն ավելի հաճախ են հանդիպում՝ սուլական (զ, ս, ձ, ծ, ց), շչական (ժ, շ, ջ, ճ, չ), « ր, ռ» և պայթական (բ, պ, փ, գ, կ, ք, դ, տ, թ) հնչյունները:

- զանգ- ոզնի- ընկույզ

  սունկ-ասեղ- մողես

  ձու-խնձոր- դեղձ

  ծիրան- տոնածառ-առյուծ

  ցուլ-կացին- հաց

- ժամացույց - բաժակ - կուժ

  շաքար-կոշիկ-էշ

ջահ-մրջուն-արջ

ճուտիկ-օճառ- սուրճ

չիր-աչք -կակաչ

- բալ- զեբր-կաղամբ

պանիր- կապիկ-կարապ

փուչիկ-ափսե-շերեփ

- գազար- արագիլ- վարունգ

կատու- ակնոց – ձուկ

քանոն- աքլոր- ձեռք

- դանակ- կարկանդակ-բադ

տիկնիկ- ատամ-մատիտ

թուզ- աթոռ- կաթ

- ռետին - հեռախոս-ծառ

որպե -տորթ- սխտոր

Բարձր միավորով են գնահատվել այն երեխաները, որոնք կարողացել են ճիշտ արտաբերել բառերի ընդհանուր քանակի 90-100%-ը կամ 57-63 բառ: Միջին գնահատական են ստացել այն երեխաները, որոնք ճիշտ են արտաբերել բառերի ընդհանուր քանակի 50-90%-ը կամ 32-57 բառ և ցածր են գնահատվել այն երեխաները, որոնք կարողացել են ճիշտ արտաբերել հանձնարարված բառերի 25-35% -ը կամ 16-22 բառ:

3. Հնչյութային ընկալման հետազոտություն

Նախադպրոցականների հնչյութային ընկալման հետազոտության համար առաջարկվել է հնչողությամբ մոտ հնչյունների վանկային շարքեր:

- Սա - զա ----------զա-սա
- ժա –շա ---------- շա-ժա
- Ձա –շա ----------շա-զա
- ժա – զա ----------զա-ժա

- Բա – պա ---------- պա - բա
- Դա – տա ---------- տա - դա
- Գա-դա ---------- դա- գա
- Ռա- րա ----------րա- ռա
- Սա – ժա –շա ---------- շա- սա- ժա
- Զա- սա – ժա ----------սա - ժա- զա
- Բա - պա – դա----------պա – դա - բա
- Կա – գա- թա ---------- գա – թա - կա
- Ռա - րա –լա ---------- րա – լա - ռա
- Ցա - չա - ծա ---------- չա – ցա - ծա
- Ճա – ջա – ձա ---------- ջա- ձա - Ճա

Բարձր միավորով են գնահատվել այն երեխաները, որոնք կարողացել են կրկնել վանկերի ընդհանուր քանակի 90-100%-ը / 66-74 վանկ/, միջին ցուցանիշ են ստացել վանկերի 50-90 % /37-66 վանկ/ ճիշտ արտաբերած նախադպրոցականները և ցածր են գնահատվել՝ 25-35% /18-25 վանկ/ ճիշտ արտաբերած երեխաները:

3. Բարդ վանկային կառուցվածքով բառերի արտաբերման հետազոտություն

Հետազոտման համար առաջակվել է բարդ վանկային կառուցվածքով բառակապակցությունների կրկնություն:

- Բազմավաստակ ուսուցչուհի
- Գույնզգույն ծաղկեփունջ
- Հետաքրքիր ճանապարհորդություն
- Գեղատեսիլ բնություն
- Ճերմակափայլ սպիտակեղեն
- Կապույտաչյա մանուշակ
- Ամանորյա դիմակահանդես
- Բազմամարդ խնջույք

- Խաղաղության աղավնի
- Հետաքրքրաշարժ մուլտֆիլմ
- Չարաճճի փոքրիկներ
- Աղմկոտ հանդիսատես
- Աշխարհագրական դիրք
- Լեփլեցուն ավտոբուլ
- Քաղցած կենդանիներ

Գնահատելիս հաշվի է առնվել բառերի ճիշտ արտաբերումը, վանկերի և հնչյունների փոխարինումներն ու բացթողումները:

Բարձր են գնահատվել այն երեխաները, որոնք կարողացել են ճիշտ կրկնել բոլոր բառակապակցությունները, միջին գնահատական են ստացել այն երեխաները, որոնք ճիշտ են արտաբերել 15-25 բառ և ցածր են գնահատվել այն երեխաները, որոնք կարողացել են ճիշտ կրկնել 10-15 բառ:

4. Բառապաշարի հետազոտություն

Նախադպրոցականների բառապաշարի հետազոտությունը իրականացրել ենք թեմատիկ նկարների շարքի անվանման կարողության հիման վրա: Առաջարկվել է ընտանի կենդանիների, հագուստի պարագաների, խաղալիքների, կահույքի և բանջարեղենի պատկերներով նկարներ: Երեխան պետք է անվաներ նկարները և կարողանար կատարել ընդհանրացում: Բառապաշարի զարգացման մակարդակը ստուգելու համար առաջարկվել է նշել տվյալ գոյականին բնորոշ հատկանիշ կամ գործողություն:

- Հավ, կով, այծ, կատու, շուն, գառ ---------- կենդանիներ
- գլխարկ, զգեստ, գուլպա, բաճկոն---------- հագուստ
- տիկնիկ, մեքենա, հոլ, գնդակ, շվի ----------խաղալիք
- պահարան, աթոռ, մահճակալ, գրասեղան---կահույք
- լոլիկ, պղպեղ, վարունգ, սոխ, համեմ--------- բանջարեղեն
- խնձոր, ծիրան, սալոր, խաղող, դեղձ----------միրգ

Հետազոտության արդյունքների վերլուծությունը գնահատվում է ըստ անվանած առարկաների քանակի, հատկանիշների և գործողությունների համապատասխանությամբ:

Բարձր միավորով են գնահատվել այն երեխաները, որոնք կարողացել են ճիշտ և ինքնուրույն անվանել և ընդհանրացնել թեմատիկ նկարները: Կարողացել են հեշտությամբ ընտրել յոթ և ավելի առարկաներին համապատասխան հատկանիշներ և գործողություններ: Միջին գնահատական են ստացել այն երեխաները, որոնք ճիշտ են կատարել առաջադրանքի 50%-ը, իսկ ցածր միավոր ստացել են առաջադրանքի 25% կատարած նախադպրոցականները:

5. Տարբեր խոսքային միավորների վերլուծության հմտությունների հետազոտություն

Հետազոտության համար առաջակվել է չորսից հինգ նախադասությունից կազմված տեքս: Ուսումնասիրվել է նախադպրոցականների տեքստը, նախադասությունները, տարբեր վանկային կառույցներով բառերի վանկային և հնչութային վերլուծություն կատարելու կարողությունը: Երեխային առաջարկվել է ուշադիր լսել տեքստը, հիշել, կրկնել, հետո հաջորդաբար ասել նախադասությունները:

Երեխաները դաստիարակչուհու հետ զբոսնում էին այգում: Հանկարծ նկատեցին, որ երկու թռչուն արագ, արագ թռչում են ծառից ծառ: Մոտենալով հասկացան, որ նրանք նոր բույն էին հյուսում: Նշանակում է արդեն գարուն է: Թռչունները վերադառնում են:

- Տեքստը վերլուծվել է ըստ նախադասությունների, յուրաքանչյուր նախադասություն ըստ բառերի, ընտրվել է հինգ, վեց բառ, կատարվել է վանկային և հնչութային վերլուծություն:
- Երեխան բառերի, վանկերի քանակը պետք է որոշեր կամ բարձրաձայն արտասանելով, կամ՝ ծափերով:
- Հնչութային վերլուծության կարողության հետազոտությունը կատարվել է բառում հնչյունների քանակի, առկայության, հաջորդականության որոշման կարողությամբ:

Նախադասությունների, բառերի վանկային և հնչյունահնչութային վերլուծության հետազոտության արդյունքները կատարվել են առանձին: Արդյունքները գումարվել են:

6. Խոսքի քերականական կառուցվածքի հետազոտություն

Խոսքի քերականական կառուցվածքի հետազոտության համար ընտրվել է համապատասխան նկարներ՝ ուղղական հոլովով գոյականների հոգնակի թվի ձևավորման կարողության բացահայտման համար: Հանձնարարվել է, հարցերի օգնությամբ շարունակել անվարտ նախադասությունները:

- *Եզակի թիվ* *Հոգնակի թիվ*

մատիտ …….

գիրք ……..

մեքենա ……..

տիկնիկ ……...

ծառ ……...

տերև ……...

մայրիկ ……...

մուկ ……...

շուն ……...

մատ ……...

- Սկյուռիկն ապրում է ..... / որտե՞ղ՝ փչակ /

Կապիկը սիրում է...../ ինչ՝ բանան՞/

Երեխաները ...../ խաղալ, գնդակ՝ ի՞նչ են անում, ինչո՞վ /

Մենք .....կրկես / գնալ՝ ինչ արեցի՞նք /

Խոսքի քերականական կառուցվածքի մակարդը որոշելու համար կարևոր է ուսումնասիրվել երեխայի խոսքում տարածական կողմնորոշման կարողությունները:

Այդ նպատակով հանձնարարվել է կազմել նախադասություններ համապատասխան բառակապակցություններով:

- Պահարանի՝ տակ, մեջ, վրա, դիմաց

Բազմոցի՝ մոտ , հեռու, կողքը

Սեղանի՝ վրա, տակ, հեռու, մոտ

Բարձր միավորով են գնահատվել այն երեխաները, որոնք կարողացել են ճիշտ և ինքնուրույն կատարել հանձնարարությունները: Կարողացել են հեշտությամբ ընտել և տարբերել գոյականների եզակի և հոգնակի թիվը: Հարցերի օգնությամբ ճիշտ են կազմել՝ համաձայնեցնելով գոյականի դեմքը և թիվը և ավարտել են անավարտ նախադասությունները: Վերջածանցների տեղի պարագաների ճիշտ կիրառմամբ կազմել են նախադասություններ: Միջին գնահատական են ստացել այն երեխաները որոնք ճիշտ են կատարել առաջադրանքի 50%-ը, իսկ ցածր միավոր ստացել են առաջադրանքի 25% կատարած նախադպրոցականները: Արդյունքները գումարվել են:

7. Կապակցված խոսքի հետազոտություն

Նախադպրոցականների կապակցված խոսքի հետազոտության համար առաջակվել է՝ 4-5 հաջորդական սյուժետային նկարների միջոցով կազմել պատմվածք: Ուսումնասիրվել է նաև, երեխայի վերապատմելու և պատմվածքը վերնագրելու, այն ինքնուրույն ավարտելու կարողությունը: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվել է առանձին, արդյունքները գումարվել են:

❖

- Կա մի գեղեցիկ գարնանային տոն: Այդ օրը աշխարհի բոլոր մայրիկների, տատիկների և աղջիկների տոնն է: Բոլորը սիրով սպասում և պատրաստվում են շնորհավորել նրանց: Այդ օրը կարծես ծաղկի տոն լինի, բոլորը շտապում են նվերներ ու բարի մաղթանքներ մատուցեն կանանց և աղջիկներին:

❖

- Մի անգամ նապաստակը որոշեց անցնել գետի մյուս ափը, բայց չգիտեր թե ինչպես: Օգնության կանչեց ոզնուն, բայց նա էլ չկարողացավ մի խորհուրդ տալ: Երկուսով որոշեցին դիմել...

Հիմք ընդունելով, Տ.Ա. Ֆոտեկովայի առաջարկված և մեր կողմից փոփոխության ենթարկած նախադպրոցականի խոսքի ընդհանուր վիճակի հետազոտման և

գնահատման բալային համարակարգը, հետազոտվել է նախադպրոցականների խոսքի հետևյալ բաղադրիչները՝ արտաբերական ապարատի շարժողականություն, հնչարտաբերություն, հնչութային ընկալում, բարդ վանկային կառուցվածքով բառերի արտաբերում, բառապաշար, տարբեր խոսքային միավորների վերլուծություն, խոսքի քերականական կառուցվածք և կապակցված խոսքը: Բոլոր հանձնարարությունների կատարման առավելագություն միավորը 65 բալ է, ըստ դրա էլ կարելի է առանձնացնել յուրաքանչյուր երեխայի խոսքի զարգացման անհատական միավորները և գնահատել նրա խոսքի ընդհանուր զարգացման մակարդակը:

Ըստ ստացված տվյալների առանձնացվել է խոսքի զարգացման երեք մակարդակ.

1-ին `100% - 92,3 % (65-60 միավոր) բանավոր խոսքի զարգացման բարձր մակարդակ

2-րդ՝ 84,6 % - 53,8 % (55-35 միավոր) բանավոր խոսքի զարգացման միջին մակարդակ

3-րդ՝ 46,1% - 30,7% (30-20 միավոր) բանավոր խոսքի զարգացման ցածր կամ անբավարար մակարդակ:

Հետազոտության տվյալները ներկայացված են թիվ 1 աղյուսակում:

Աղյուսակ 1

Բանավոր խոսքի զարգացման հետազոտության արդյունքներ

Երեխաներ	1	2	3	4	5	6	7	8	Արդյունքներ
1	3	1	3	1	3	5	5	6	27 միավոր՝41,5%
2	5	5	5	5	3	11	15	5	54 միավոր՝83,0%
3	5	3	3	3	3	9	9	5	40 միավոր՝61,5%
4	5	5	5	5	5	15	11	9	60 միավոր՝92,3%
5	5	5	5	5	5	11	15	10	61 միավոր՝93,8 %
6	5	5	5	3	3	9	7	8	45 միավոր՝69,2%

7	5	5	5	3	3	7	11	10	49 միավոր`75,3 %
8	3	3	3	1	3	5	7	5	30 միավոր` 46,1 %
9	5	1	3	1	3	5	5	6	29 միավոր` 44,6 %
10	5	5	3	5	3	7	7	6	41 միավոր` 63,0 %

1. Արտաբերական ապարատի շարժողականություն
2. հնչարտաբերություն
3. հնչութային ընկալում
4. բարդ վանկային կառուցվածքով բառերի արտաբերում
5. բառապաշար
6. տարբեր խոսքային միավորների վերլուծություն
7. խոսքի քերականական կառուցվածք
8. կապակցված խոսքը

Համադրելով հետազոտությանը մասնակցած նախադպրոցականների բանավոր խոսքի զարգացման արդյունքներ կարող ենք առանձնացնել հետևյալ խմբերը՝ նկար1:





Նկար 1. Խոսքի զարգացման տոկոսային տվյալները

Այսպիսով՝ մեր կողմից կատարած, նախադպրոցականների բանավոր խոսքի հետազոտությունը և բալային համակարգով գնահատումը թույլ տվեց երեխաներին առանձնացնել հետևյալ խմբերում:

1-ին՝ բանավոր խոսքի զարգացման բարձր մակարդակ 2 երեխա:

2-րդ՝ բանավոր խոսքի զարգացման միջին մակարդակ 5 երեխա:

3-րդ՝ բանավոր խոսքի զարգացման ցածր մակարդակ 3 երեխա:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, խոսքի զարգացման բարձր մակարդակ ունեցող երեխաները հիմնականում դժվարություններ են ունենում տարբեր խոսքային միավորների վերլուծության, խոսքի քերականական կառուցվածքի և կապակցված խոսքի ժամանակ: Խոսքի զարգացման միջին մակարդակ ունեցող երեխաների դժվարությունները նկատվում են ինչպես բարդ վանկային կառուցվածքով բառերի արտաբերման, բառապաշարի զարգացման, այնպես էլ տարբեր խոսքային միավորների վերլուծության, խոսքի քերականական կառուցվածքի և կապակցված խոսքի ուսումնասիրման դեպքում: Իսկ ցածր մակարդակ ունեցող երեխաների բանավոր խոսքի, բոլոր բաղադրիչները հիմնականում տուժած են և ունեն խոսքի զարգացման անհրաժեշտություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, մեր կողմից մասնագիտական գրականության ուսումնասիրությունը, վերլուծությունը, իրականացրած հետազոտությունը թույլ է տալիս կատարել հետևյալ հիմնական հետևությունները՝

1. Նախադպրոցական երեխայի խոսքը հասնում է զարգացման որոշակի մակարդակի, այն պետք ձևավորված լինի խոսքի բոլոր բաղադրիչների լիարժեք զարգացմամբ՝ մայրենի լեզվի պահանջներին և օրինաչափություններին համապատասխան:
2. Նախադպրոցական երեխայի խոսքի լիարժեք զարգացումը կարևորագույն նախապայման է հանդիսանում է մայրենի լեզվի, դպրոցական ուսումնական ծրագրերի յուրացման, ինչպես նաև ուսուցման և առաջադիմության վրա:
3. Այս տարիքում ոչ բոլոր երեխաների խոսքն է հասնում զարգացման լիարժեք մակարդակի: Առկա բոլոր թերությունները, խոսքի լիարժեք զարգացման ճանապարհին միանշանակ ստեղծում են դժվարություններ և բարդություններ, որոնք էլ խոչընդոտ են հանդիսանում ավելի բարդ և պատասխանատու ուսումնական գործունեության հաղթահարման համար:
4. Ժամանակին իրականացված, նախադպրոցական երեխայի խոսքի բոլոր բաղադրիչների ուսումնասիրումն ու զարգացման մակարդակի գնահատումը պետք է ուղղված լինեն խոսքի խանգարումների կանխարգելմանը:
5. Խոսքի խանգարումների կանխարգելումը տարիքային այս փուլում թույլ է տալիս զերծ մնալ երկրորդային խանգարումներից, որը նպաստում է խոսքի լիարժեք զարգացմանը, գրավոր խոսքի տիրապետմանը և դպրոցական ուսումնական ծրագրերի յուրացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գալստյան Ա.Ս. Մանկական խոսքի բառապաշարի մի քանի առանձնահատկություններ: Գիտական նյութերի ժողովածու: Եր. 2001, էջ12:
2. Գրիգորյան Ա.Գ., Դիսլեքսիայի կանխարգելումը նախադպրոցական տարիքում «Հատուկ մանկավարժություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն: Երևան 2013, էջ 189
3. Հովյան Գ.Ռ., Վարդանյան Ա.Հ, Երեխաների հնչարտաբերական թերությունների շտկման աշխատանքները: /Ձեռնարկ լոգոպեդների համար/ Երևան 2008, էջ 151
4. Մարության Ս.Ա. Խոսքի զարգացման պարապմունքների կազմակերպման ժամանակակից մեթոդները: ՀՊՄՀ.-ի Պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 53-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան 2008, էջ 60-62:
5. Կարապետյան Ս. Գ. Խոսքային խանգարումների շտկմանն ու խոսքի զարգացմանն ուղղված լոգոպեդական խաղեր 5-7 տ. երեխաների համար ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան էջ 80:
6. Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր, /5-6 տարեկանների համար/ Երևան 2007, Երևան 2011, էջ 45
7. Պայլոզյան. Ժ. Հ., Ավագյան Ա.Վ., Սարատիկյան Լ. Հ., Հեքիաթները որպես նուրբ շարժողականության զարգացման միջոց: Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն միջ. բուհական գիտամեթոդական ժողովածու, Երևան 2008, N 7, էջ 51-60
8. Պայլոզյան. Ժ.Հ., Թադևոսյան Է.Ռ. Խոսքի հնչյունային թերզարգացման հաղթահարման առանձնահատկությունները. Նախաշավիղ, N7, 2011, էջ 55-59:
9. Պայլոզյան Ժ. Հ., Թադևոսյան Է. Ռ. Խոսքային նյութեր ճիշտ հնչարտաբերման ամրապնդման համար, Եր., 2009, էջ 78
10. Алексеева М.М., Ушакова О.С. Взаимосвязь задач речевого развития детей на занятиях / Воспитание умственной активности у детей дошкольного возраста. М, 2003. - с.27-43.

11. Архипова Е.Ф. Логопедическая работа с детьми раннего возраста.Учеб. Пособие. М. Астрель, 2007. - с. 224

12. Аркин, Е.А. Дошкольный возраст /Е.А. Аркин. – 5-е изд., доп., перераб. – М.: Учпедгиз, 1948. – 336 с. И. И. Аркин : 2001. - N 6. - с. 36-40

13. Винарская Е.Н. Раннее речевое развитие ребенка: Актуальные проблемы дефектологии. М., 1992. – с. 25

14. Выготский Л.С. Мышление и речь. М., 1982. Избранные психологические исследования. – с.504

15. Гвоздев А.Н. Вопросы изучения детской речи. – М., 2011. – с. 472

16. Глухов В.П. Методика формирования связной монологической речи дошкольников с общим речевым недоразвитием. – Москва, 2010- с. 370

17. Гризик Т.И. Развитие речи детей 6-7 лет. – М.:Просвещение,2007-с. 224

18. Гудонис В.П. Анализ причин нарушения развития детей и некоторые пути их профилактики. М // Дефектология. - №4. - 2004. - С..8-17.

19. Ефименкова Л.Н. Формирование речи у дошкольников. М., 1981 - с. 114 .

20. Ёлкина Н.В. Формирование связной речи у детей дошкольного возраста: Учебное пособие. – Ярославль: Изд-во ЯГПУ им. К.Д.Ушинского, 2006. с. 76

21. Жукова Н.С. Преодоление недоразвития речи у детей: Учеб.-метод.пособие. М., 1994. с.96

22. Зееман М. Расстройства речи в детском возрасте/ Под ред. и с предисл. В.К.Трутнева и С.С. Ляпидевского. М., 2012. - с. 380

23. Ковалев В. В. Проблема факторов риска в возникновении нарушений психического здоровья в детском возрасте и ее значение для профилактики // Психогигиена детей и подростков. -М., 1985. с. 56-66.

24. Лалаева Р.И., Серебрякова Н.В. Формирование лексики и грамматического строя у дошкольников с общим недоразвитием речи. СПб, Союз, 2001. - с. 160

25. Лангмейер И., Матейчик З. Психическая депривация в детском возрасте /Пер. с чеш. — Прага, 1984

26. Леонтьев А.А. Психолингвистические единицы и порождение речевого высказывания. М., 2014. -с. 571

27. Лисина.М.И. Проблема онтогенеза общения. М., 1986 -с. 144

28. Лурия А.Р. Юдович Ф.А. Речь и развитие психических процессов ребенка-М, 1996.

29. Лурия А.Р. Под редакцией Е. Д. Хомской. Ростов н/Д.: изд-во «Феникс», 1998. -416 с.

30. Логопедическая работа с дошкольниками: Учеб. пособие для студ. высш. пед. учеб. заведений / Г.Р. Шашкина./ М., Издательский центр «Академия», 2003. -с. 240